ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ Ռ. ՀԱՏՏԵՃՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ. «ՄԱՐԴՈՑ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԵՂՃՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ*

ՀՏԴ 82(479.25)

Մանուշ Բալայան
ԱրՊՀ Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի հայցորդ
Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
Manush.balayan@mail.ru

Նշանավոր արձակագիր Ռոպեր Հատտեճյանը սփյուռքահայ գրականության մեջ ամուր հիմքերի վրա դրեց ժամանակակից եվրոպական գրականության մեջ հիմնավորված գեղարվեստական մի մեթոդի՝ էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը, ըստ որի գոյատևելու կամքը և փրկվելու հավատը ստեղծում են մի տարօրինակ աշխարհ, որտեղ անխուսափելի է դառնում իրականի և երևակայականի բախումը: «Մարդոց մեծության և խեղճության մասին» ժողովածուում նա գոյութենապաշտական աշխարհայացքի և մտածողության տեսանկյունից դիտարկում է հասարակական և մարդկային փոխհարաբերությունները: Այս պարագայում ամեն ինչի շարժիչ ուժը մարդն է, մարդկային մտածողությունը, ներաշխարհի տվայտանքը, որն իր մեջ կրում է անցյալի հիշողությունը, ներկայի անխուսափելի հաշտվողականությունը և ապագայի մտայնությունն ու հույսը: Ժողովածուում քննության է առնվում մարդու հակասական էությունը, որն ի սկզբանե հոգու ու մարմնի ամբողջություն է. հոգին ձգտում է դեպի երկինք՝ դեպի մեծություն, իսկ մարմինը՝ ներքև՝ դեպի հողը, որը հիշեցնում է մահվան մասին և առաջ բերում մարդու խեղճությունը:

Հոդվածում խոսվում է հատտեճյանական էկզիստենցիալիզմի ակունքների և առանձնահատկությունների, հայ և եվրոպական հեղինակների հետ ունեցած առնչությունների մասին: Ըստ վկայությունների՝ Հատտեճյանի գոյապաշտական սկզբունքները խորապես ազգային են, և նա հայ գրականության մեջ այդ դպրոցի անվերապահ առաջնորդն է:

Բանալի բառեր՝ *էկզիստենցիալիզմ, մեծություն, խեղճություն, ինքնաորոնում, ինքնաճանաչում, իմաստասիրական խորք, հոգեբանական ընդհանրացումներ, կերպավորում, վերապրում, մտասևեռում:*

Ներածություն

Ռոպեր Հատտեճյանին նվիրված իր մենագրության մեջ գրող-հրապարակախոս Թորոս Թորանյանը նրան բնորոշում է որպես «Ամբողջական գրագետ»՝ հիմնավորե-

---

* Հոդվածը ներկայացվել է 23.03.2022:
Տպագրության է երաշխավորել բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Դանիելյանը: 04.04.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 04.04.2022:

լով. «Նախ եւ առաջ արուեստագէտ գրող մըն է ան: Ապա փորձած ըլլալով արձակի բոլոր սեռերը՝ պատկեր, պատմուածք, խոհագրութիւն, թատերգութիւն, վէպ, քննադատութիւն եւ ինչ որ կրնաք աւելցնել, բոլորին մէջ ի յայտ բերած է ոչ միայն ճաշակ եւ իմաստասիրական խորք, այլ նաեւ բացառիկ նուիրում՝ որպէս հրապարագիր»[1]:

Ճշմարիտ արվեստագետը, ինչպիսին Ռ. Հատտեճյանն է, ստեղծում է իր ուրույն իրականությունը և փիլիսոփայությունը: Այս դեպքում գեղարվեստական հարթության մեջ իրականության արտացոլումն ուղիղ համեմատական է ստեղծագործող անհատի աշխարհընկալմանը և մտածողությանը:

Հատտեճյանն իր համար ի սկզբանե ուղենիշ դարձած սարտրյան աշխարհայացքի և մտածողության տեսանկյունից է դիտարկում հասարակական և մարդկային փոխհարաբերությունները: Նրա գրական մեթոդի ակունքը կենսական պահանջներից բխող հրամայականն է, հոգու տառապանքից սկզբնավորվող հույսը:

Գոյատևելու կամքը և փրկվելու հավատը ստեղծում են մի տարօրինակ աշխարհ, որտեղ անխուսափելի է դառնում իրականի և երևակայականի բախումը: Եվ այս պարագայում ամեն ինչի շարժիչ ուժը մարդն է, մարդկային մտածողությունը, ներաշխարհի տվայտանքը:

Ռ. Հատտեճեանը Սփյուռքի գրականության մեջ ամուր հիմքերի վրա դրեց ժամանակակից եվրոպական գրականության մեջ հիմնավորված գեղարվեստական մի մեթոդի՝ էկզիստենցիալիզմի փիլիսոփայությունը, որի ուսումնասիրության շրջանակն ընդգրկում է մարդու ներաշխարհի և միջավայրի միջև ստեղծված խզման և ներդաշնակության հասնելու ձգտման բանաձևի որոնումը: Բայց միաժամանակ՝ նրա ուղենշած գոյութենապաշտական մտածողության սնուցող զարկերակն անսահման հույսն է, ինքնաբացահայտման և ինքնահաստատման հասնելու ճանապարհին դրսևորած հզոր կամքն ու ձգտումը: Փաստորեն ինքնաորոնման և ինքնաբացահայտման ուղիներում Հատտեճյան արվեստագետը կարողացավ գտնել այն ճշմարտությունը, որը դեռ պատանեկան տարիներից դարձել էր իր մտքի և անսպառ երևակայության նյութեղենացված իրականությունը:

Էկզիստենցիալիզմի դրսևորումը Ռ. Հատտեճեանի աշխարհայացքում

ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ Ռ. ՀԱՏՏԵՃՅԱՆԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔՈՒՄ

«Վերելքի ու անկման հերթագայութեան օրինաչափութիւնները քննութեան օբյեկտիվ իրողութիւնն են, սակայն իմաստաւորում են միայն գիտակցութեան բարձրագոյն ոլորտում: Այստեղից՝ Հատտէճեան իմաստասէրի տուր հակումը գիտակցութեան եւ հոգեբանութեան գործօններին, որոնք գեղագիտական հայեցողական համակարգում մնում են առաջնային ելակէտեր»[2],- գրել է Ս. Դանիելյանը՝ բնութագրելով գրողի բուն նպատակադրումը:

Էկզիստենցիալիստ գրողի աշխարհայացքի հակադրությունները որոշ դեպքերում դրսևորվում են մարդու մտածողության ոլորտներում, երբեմն մարդ-հասարակություն բախման մեջ, նաև՝ բնության և գիտակցության խաչաձևումների ոլորտում:

---

[1] **Թորանեան Թ.,** Ամբողջական գրագէտը. Ռոպէր Հատտեճյան, Հալէպ, 2002, էջ 3:

[2] **Դանիէլեան Ս.** , Ռոպեր Հատտէճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն, Իսթանպուլ, 1996, էջ 71:

Հեղինակը բնութագրում է անհատին, նրա տիեզերքը, որ շրջափակված է մեծության ու խեղճության ցանցով: Նա ուրվագծում է անբեկանելի մի համայնապատկեր, որտեղ առանց մեկը մյուսի չեն կարող գոյություն ունենալ տափարակն ու լեռը, լույսն ու ստվերը, նաև՝ մեծությունն ու խեղճությունը: Հենց ժողովածուի նախաբանում Ռ. Հատտեճյանը տալիս է պատմվածքների վերլուծության և ընդհանրացման բանալին, որը պետք է բացի մարդու էությունը՝ մեծության ու թշվառության վայրիվերումների մեջ չարչրկված: Ընդ որում՝ նրա համակրանքը միշտ մեծության կողմն է: «Ճիշդ է, որ մեծութիւնը մահկանացու է, բայց մեծութիւնը գեղեցիկ է եւ արժէ, որ գուրգուրանք անոր վրա: Կ՝արժէ, որ ձգտինք անոր...»[1] ,- գրում է Ռ. Հատտեճյանը «Մարդոց մեծութեան և խեղճութեան մասին» ժողովածուի նախաբանում:

Փոքր սյուժեները և կերպարների խոր ապրումները Ռ. Հատտեճյանի պատմվածքներում ստեղծում են յուրօրինակ ձևաբովանդակային ներհյուսում, որի մեջ պատկերը ներապրում է, իսկ հերոսների հոգեբանական ընդվզումը՝ խորքային նկարագրություն: Գոյութենապաշտական արձակի տառապանքն ու որոնումը, ընդվզումն ու հույսը Հատտեճյանի պատմվածքների ատաղձն ու սյուններն են:

«ՄԱՐԴՈՑ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԽԵՂՃՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Պոլսահայ նշանավոր արձակագրի «Մարդոց մեծութեան եւ խեղճութեան մասին» ժողովածուն 1977-ին արժանացավ «Ալեք Մանուկեան» մշակութային հիմնադրամի գրական մրցանակի և 1979 թ. տպագրվեց Բոստոնում:

Ժողովածուում ընդգրկված 13 պատմվածքները քննության են առնում մարդու հակասական էությունը, որն ի սկզբանե հոգու ու մարմնի ամբողջություն է:

Ժողովածուի առաջին պատմվածքում դեպքերի տրամաբանական հաջորդականության և գլխավոր հերոսի կողմից այդ դեպքերի ընթացքից արված երևակայական հետևությունների միջոցով Հատտեճյանը ստեղծում է հոգեբանական վերապրումի ու ներապրումի, մտածումի և իրականության հակասություններից ծնված պատկերներ:

Նույն պահին մարդու խեղճությունը՝ նրան մահվան դուռը հասցնող հիվանդությունը, կարող է փրկություն ու սկիզբ դառնալ՝ նոր հնարավորություններ ու ասպարեզներ բացելու, սեփական մեծությունը շոշափելիորեն գիտակցելու և կյանքն այլ տեսանկյունից արժևորելու ճանապարհին:

Այսպիսի սկիզբ եղավ Գուրգենի համար հանկարծակի հիվանդության պատճառով օդանավից ուշանալը և ստույգ մահից փրկվելը (թռիչքի պահին օդանավը խորտակվում է Միջերկրականում): Գուրգենն ամեն ինչ պիտի կորցներ՝ կյանք, հարստություն, նպատակներ, ուրախություններ:

Իր մեծությունը գիտակցելու դիտակետից Գուրգենը ճիշտ է գնահատում նաև իր զարմիկ Վարուժանի խեղճությունը, որը հարուստ ժառանգորդ պիտի դառնար, եթե դիպվածն այլ կերպ տնօրիներ: Այդ պարագայում ճիշտ հակադրած դիրքերում կլինեին տվյալ դեպքում մեր տեսադաշտում գտնվող այդ երկու մարդկանց «մեծությունն» ու «խեղճությունը»:

Հոգեբան գրողը վերհանում է կյանքի երևույթներն արժևորելու, մարդու կողմից

---

[1] **Հատտէճեան Ռ.**, Մարդոց մեծութեան եւ խեղճութեան մասին, Պոսթըն,1979 (այսուհետ՝ Հատտէճեան Ռ.), էջ 5-6:

տարբեր տեսանկյուններից վերաբերմունք մշակելու սուբյեկտիվությունն ու փոփոխականությունը: Նույն երևույթի նկատմամբ մարդիկ լրիվ տարբեր դիրքորոշումներ ունեն՝ նայած իրենց մեծությա՞ն, թե՞ խեղճության տեսանկյունից են դիտարկում այն: «Կարուժան ժառանգեց վեց հարիւր յիսուն հազարի մօտ հարստութիւն: Նախ շուարեցաւ, սարսափեցաւ: Յետոյ վարժուեցաւ հարուստ ըլլալու գաղափարին եւ սկսաւ նուիրատուութեանց: Միայն թէ քսան հազարը շատ գտաւ հիւանդանոցին համար: Գոհացաւ երկու հազարով: Նոյն չափով զեղչեց նաեւ միւս հաստատութիւններուն բաժինը»[1]:

Հատտեճյանի արձակի առանձնահատկություններից է փիլիսոփայական եզրահանգումների առանցքն անցկացնել խորհրդանիշների նուրբ համադրությունների միջով: «Ամբողջ օրը անցանք ամայի ճամփաներուն վրայէ, լեռներու ու բլուրներու միջեւ, գիւղերու ու գիւղացիներու մէջէն: Երբ գիշեր եղաւ, ու մութը իջաւ մեր յոգնութեան, ինչպէս նաեւ բոլոր մեր ծրագիրներուն վրայ, ընկերս ճամբուն եզերքը՝ քարի մը վրայ նստաւ ու ըսաւ.-Ալ չեմ քալեր»[2],- այսպիսի սկիզբ ունի «Զրոյց մարդոցմէ հեռու» պատմվածքը :

Նրանք երկուսով արդեն գրել են իրենց կյանքի գրքի համարյա բոլոր էջերը և մարդկանցից լքված ու հեռու իրենց կյանքի վերջը խորհրդանշող գիշերվա մեջ խորհրդածում են ու փորձում հասկանալ կյանքի իմաստը, իրենց ապրածի իմաստը:

Մարդուն՝ որպես առանձին ու յուրօրինակ մտածողական սուբյեկտ դիտարկելը գոյութենապաշտական փիլիսոփայության կարևոր սկզբունքներից է:

Այս դեպքում էլ Հատտեճյանը մարդկանց հայացքներից հեռու խորհելու հնարավորություն է տալիս կյանքի ճանապարհների փորձությունները հաղթահարած անհատին: Արդյոք նրանք սիրո՞ւմ են իրար: Եթե՝ այո՛, ուրեմն նրանք պետք է մեկը մյուսի համար պատրաստ լինեն զոհողությունների. դա է սիրո գերագույն արտահայտությունը:

Մեր կարծիքով, պատահական ընտրությամբ չէ «Այդքան պարզորեն» վերնագրված պատմվածքը հաջորդում «Զրոյց մարդոցմէ հեռու» պատումին: Այստեղ ճիշտ հակառակն է. տարիների կապն առանց որևէ պատճառի հեշտությամբ կարող է խզվել, եթե չկա սեր, ներում, նվիրում: «Կը սիրէի՞ զինքը: Չեմ գիտեր: Որովհետեւ չեմ գիտեր, թէ ինչ կը նշանակէ սիրել: Եթէ ասիկա կը նշանակէ մէկու մը հաւատարիմ մնալ կամ մէկու մը ներկայութենէն հաճոյք առնել, ուրեմն այո, կը սիրէի զինքը»[3],-խորհում է հերոսուհին, սակայն ոչ մի քայլ չի ձեռնարկում իր կողմից՝ բաժանումը կանխելու համար: Թերևս նա փորձում է մյուսի՝ տղամարդու զգացմունքներն իր նկատմամբ:

Գրողին հաջողվել է ճշտորեն ներկայացնել կերպարների՝ ներքին հոգեբանական լարումն առերևույթ սքողելու ջանքերը:

Երկու դեպքում էլ հեղինակի եզրահանգումը նույնն է. փոխադարձ սերը, նվիրումը հնարավոր է դարձնում փորձությունների և դժվարությունների հաղթահարումը, որով էլ պայմանավորվում է գերագույն երջանկությունը:

Մարդու մեծության ու խեղճության յուրօրինակ համադրում է ժողովածուի «Թաշկինակներ» պատմվածքը: Նույն ձևով ու նույն լվացքի մեջ կինը պետք է լվա ամուսնու

---

[1] **Հատտէճեան Ռ.,** էջ 22:
[2] Նույն տեղում, էջ 25:
[3] Նույն տեղում, էջ 34:

և որդու թաշկինակները, ընդ որում հոր թաշկինակի թուքը պիտի մաքրեր, իսկ որդու թաշկինակից՝ սիրած աղջկա համբույրի հետքը: Ընդամենը՝ այսքանը, սակայն որքան զգացմունքներ ու հույզեր կան՝ կապված թաշկինակներին հայտնված բծերի պատմությանը: Թերևս Հատտեճյանի նպատակադրումը մեկն է՝ նույն հարթության մեջ ցույց տալ կյանքի հակասական երևույթներին դիմակայող մարդու՝ մեծությունից և խեղճությունից բխող հարափոփոխությունը:

Սեփական ապրումներից և հիշողություններից է սկիզբ առնում փիլիսոփայության ուսուցիչ Վահե Սիրունյանի խեղճությունը: Իր համար մեքենայական, ձանձրանալու չափ սովորական դարձած դասախոսության ընթացքում նա վերապրում է իր կյանքն արմատապես փոխած բոլոր պահերն ու դեպքերը: Աղջկա՝ Աստղիկի հիվանդությունը, նրա հիվանդանալու պատճառ դարձած քրոջ արարքը հուսահատ ու խեղճ դրության մեջ են դրել սիրասուն հորը, որ ամեն ինչ կտար, միայն թե ավագ դստեր՝ Հասմիկի հետ կապված դեպքը չլիներ: «Գլխէ հանեց իր քրոջը խօսեցեալը:- Սիրունեանը հոս դարձեալ գլուխը կը հակէ-: Ինչպէս գետնին տակը կ՝անցնի Աստուած իմ, ամէն անգամ որ այս դէպքը կը յիշէ»[1]: Իր այս խեղճության մեջ, սակայն, Սիրունյանն առերևույթ պարտավոր է մնալ բարձրության վրա, քանզի նա պատասխանատու է հիվանդ աղջկա համար, որ իր կարիքն ունի առավել, քան երբևէ, պարտավոր է հայրական սիրով խորհուրդներ տալ և երջանկություն մաղթել մյուս աղջկան, որ կամա թե ակամա դարձել է իրենց խեղճության պատճառը: Միաժամանակ նա պարտավոր էր շարունակել փիլիսոփայության դասերը՝ թեկուզ մեքենայորեն առաջ տանելով նշանավոր փիլիսոփաների տեսությունների մեկնությունները, միաժամանակ ամեն օր, ամեն ժամ վերապրելով իր և իր դուստրերի խեղճ անօգությունը, հուսահատ հավատով փնտրելով մեծության հասնելու արահետները:

Իր կերպավորման մեջ ամբողջովին միստիկական մտահղացում է «Մարդոց եւ իրենց խեղճութեան մասին» պատմվածքը:

Մահը մարդու գոյության ավարտն է. Հատտեճյանը հավատարիմ է գոյութենապաշտ փիլիսոփայության տեսակետին, որ կյանքից դուրս չկա ուրիշ կյանք, և մահը բացարձակապես հավասարեցնում է բոլոր մարդկանց, եթե նրանք անգամ Մնջոյանի նման են, որ «կեանք տուաւ տասներկու գոյութիւններու և տասներկուքով բազմապատկուած ուրիշ կեանքերու, որ տեսաւ երկու ահարկու պատերազմներ եւ ջարդեր, որ տուն շինեց, ծառ տնկեց, սիրեց, ուրախացաւ կամ տառապեցաւ»[2]:

«Մարդոց եւ իրենց խեղճութեան մասին» պատմվածքում Ռ. Հատտեճյանը վերստին հաստատում է Ժողովածուի «Առաջաբանում» ներկայացված այն միտքը, որ «Այնշթայնի հոյակապ ուղեղէն ֆիզիքական գետնի վրայ աւելի բան չմնաց, որքան մնաց աշխարհի ամէնէն տգէտ եւ տխմար մարդու ուղեղէն»[3]:

Իրատեսական առումով մարդու խեղճության ցուցադրման առարկայորեն ավելի տեսանելի պատկեր դժվար է երևակայել, սակայն կա երևույթի մեկնաբանման նաև այլաբանական տարբերակը. «Սփի՛ռքն է «Մնձо Մնջոյեանը», որի աչքերը հայոց եկեղեցին է, որի զաւակները՝ գաղթօջախները: Այն Սփիռքը, որի վաղուայ օրուան չի հաւա-

[1] Նույն տեղում, էջ 51:
[2] Նույն տեղում, էջ 58:
[3] Նույն տեղում, էջ 5:

տում Ռոպէր Հատտէճեանը, այն Սփիւռքը, որի «մահը» վաղուց արդէն օրակարգում է, որն արդէն ամէն վայրկեան մի քիչ մեռնում է, այն Սփիւռքը, որի սիրտը մէկընդմիշտ բզկտուած է»[1],- գրել է Ս. Դանիելյանն իր մենագրության մեջ:

Իսկ ո՞րն է Հատտեճյանի՝ մարդկանց մեծությունը պատկերելու չափանիշը: Իրականում նշածողը բարձր է դրված, սակայն մարդու միտքը սահմաններ չունի և խորություններն ու բարձրությունները չեն վախեցնում նրան:

«Մարդոց եւ իրենց խեղճութեան մասին» պատմվածքին հաջորդում է «Մարդոց եւ իրենց մեծութեան մասին»-ը: Դարձյալ անկում ու թռիչք, թշվառություն ու դիմակայություն. մեկը պայմանավորում է մյուսի գոյությունը, ինչպես երկու հակադիր բևեռներ: Ս-պատակադրումը նույնն է՝ ցույց տալ մարդու խեղճության ու մեծության եզրագծերը, իսկ դիտարկման հարթություններն ու դիտակետերը բոլորովին տարբեր են:

Կերպարի մեծությունը, ըստ Ռ. Հատտեճյանի, սկզբնավորվում է Նարեկացու աղոթքի և ապաշխարանքի սահմաններից: «Ես եմ այդ բոլորը, եւ բոլորի յանցանքները իմ մէջ են»[2],- ասել է մեծ աղոթասացը:

«Հինէն ի վեր ինծի այնպէս կը թուի որ շատ մը կարեւոր դէպքերու պատասխանատուն ես եմ»[3],- ասում է Հատտեճյանի հերոսը: Ինքնորոնման, ինքնաճանաչման ճանապարհին մարդը կարող է իր մտքով ու կամքով բարձրանալ միջավայրի ճղճիմ միջակությունից և դառնալ աշխարհի համար կարևոր էակ:

«Երկրագունդին վրայ աննշան մարդ չկայ.... Ամէն մարդ նստած տեղէն ամբողջ աշխարհը կը կառավարէ»[4],- ասում է Հատտեճյանը:

Եթե մարդիկ են կառավարում աշխարհը, իսկ ո՞ւր է Աստված: Պատասխանը «Դարձեալ մարդոց եւ իրենց մեծութեան մասին» պատմվածքում է. նա, ով արարել է գոյություն ունեցող ամեն ինչ, պատրաստվում է վերջ տալ իր կյանքին, քանզի, մարդն անտեսեց իրեն ստեղծողին և ազատ կամքով գնաց իր ճանապարհով, ի՛նքը դարձավ ստեղծող:

Իրերի բնության հատտեճյանական փիլիսոփայական եզրահանգումները, անշուշտ, առնչություններ ունեն սարտրյան գոյապաշտության ընդհանրացումներին: Այս դեպքում մարդկանց մեծությունը, որը միշտ գնահատելի է և գերադասելի, անխուսափելի է դարձնում բախումը, խզումը Աստծո և մարդկանց միջև:

Աստված էլ գնահատվելու կարիք ուներ, տառապանքով ստեղծած իր հրաշքների համար մեծարվել էր ուզում, դրա համար ստեղծեց իր ամենամեծ հրաշքը՝ Մարդուն, սակայն Աստված էլ կարող էր սխալվել և նույնիսկ մահ փնտրել:

Աստված մահվան մեջ իր կորսված մեծությունն էր փնտրում և իր փրկությունը: «Անհրաժեշտ է ձեռք բերել այնպիսի հպարտություն, որն ինքն իրեն ժխտում է փրկվելու համար»[5],-այսպես է նախագծում փրկության ճանապարհը նաև էքզիստենցիալիստ գրող Ալբեր Քամյուն:

Կյանքի և մահվան մասին խորհրդածությունների նոր ասպարեզ է բացում «Անոնք որ կը սկսին մեռնիլ» պատմվածքը, որի մեջ ներկայացված են նույն սկիզբը և փիլիսո-

---

[1] **Դանիէլեան Ս.** , նշվ. աշխ., էջ 80:
[2] **Նարեկացի Գրիգոր.,** Մատեան ողբերգութեան, Երևան, 2003, էջ 436:
[3] **Հատտէճեան Ռ.,** էջ 63:
[4] Նույն տեղում, էջ 65:
[5] **Կաֆկա Ֆ.,** Դատավարություն, Երևան, 1991, էջ 220:

փայական տարբեր եզրահանգումներ ունեցող երեք պատմություններ:

Սրճարանում նստած են երեք ընկերներ, որոնք պատմում են կյանքի ու մահվան մասին իրենց ապրումների և մտածմունքների մասին: Սակայն արդարացիորեն թվում է՝ նույն պատմության միանգամայն տարբեր երեք տարբերակ է ներկայացնում ու երևակայական մտածողության արդյունքում՝ երեք եզրահանգում ու վերջաբան է պատկերում:

Հարցադրումը մեկն է. ե՞րբ է «մեռնում» մարդը:

Առաջին դեպքում, ըստ Գևորգի, դա այն պահն է, երբ նորանոր սպասելիքներով միշտ առաջ գնացող ու ապագային նայող մարդը հանկարծ կանգ է առնում և վերհիշում անցյալը՝ մանկությունն ու պատանեկությունը:

Երկրորդ դեպքում մարդու ծնունդն արդեն իր մեջ ունի մահվան գաղափարն ու թվականը, և կյանքի ընթացքը մահվան դատապարտվածի յուրօրինակ մի երթ է դեպի անխուսափելի վերջնակետ:

Վերջին դեպքում մահը գիտակցվում է միմիայն որպես ֆիզիկական երևույթ: «Մեր կեանքը յաւիտենութիւն մըն է եւ ինչ որ դուք մահ կոչել կուզէք, ինծի համար յաւիտենութեան մը վերջին վայրկեանն է, որուն ես երբեք պիտի չկարենամ հասնիլ»[1],- գրում է Ռ. Հատտեճյանը:

Այս պարագայում բնութագրական են գրականագետ Ս. Դանիելյանի հետևյալ խոսքերը. « Ռ. Հատտէճեանին հիացնում է մարդու ներաշխարհի թռիչքը: Նրան հիացնում է առաւել եւս տառապանքի մէջ նոյն մարդու դիմակայութեան սահմանը, երբ նա չի յանձնւում թշուառութեան կամ խեղճութեան յորձանքին»[2]: Պատմվածքում էլ մարդու պայքարող տեսակը մեկ մտասևեռում ունի՝ «դատապարտված ենք ապրելու»[3]:

Գրականագետ Ս. Դանիելյանը «Մարդոց մեծութեան եւ խեղճութեան մասին» ժողովածուի քննության տիրույթներում աղերսներ է գտնում Հատտեճյանի և ֆրանսիական գոյութենապաշտական փիլիսոփայության ազդեցությունը կրող սփյուռքահայ նշանավոր հեղինակ Վազգեն Շուշանյանի միջև՝ հատկանշելով նրանց երկուսի մտերմությունը «ապրելու պարտադրութեան» սկզբունքին, ընդգծելով նաև երկուսի երկերում գոյատևության պատգամի ծրագրային նշանակություն ունենալը: Սակայն միանգամայն տարբեր աղբյուրներից են սնուցվում երկու հեղինակների գեղագիտական սկզբունքների ընդհանրացումները, ինչպես նկատում է Ս. Դանիելյանը «Ռոպեր Հատտէճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն» մենագրության մեջ:

Դրանք Ռ. Հատտեճյանի դեպքում ունեն հոգեվերլուծական և փիլիսոփայական ընդհանրացումներ և բխում են համամարդկային մտածողության ու զգացողության սկզբունքներից:

Վ. Շուշանյանի պարագայում գոյատևման փիլիսոփայությունը խորապես ազգային ակունքներ ունի և ազգային վերապրումի սահմանում ու նպատակակետ: «Մահուան հետ դաշինք կռեցինք՝ տարածութենէն խլելու համար հպարտութեամբ ու զօրութեամբ ապրելու մեր անառարկելի իրաւունքը»[4],- գրում է Վ. Շուշանյանը՝ հաստատե-

---

[1] **Հատտէճեան Ռ.,** էջ 82:

[2] **Դանիէլեան Ս.** , նշվ. աշխ., էջ 76:

[3] **Հատտէճեան Ռ.,** էջ 82:

[4] **Շուշանյան Վ.,** Ներքին դաշտանկար, Երևան,1995, էջ 259:

լով տառապանքն ու ողբերգական ճակատագիրը հաղթահարելու աննահանջ պատգամը: Եվ ինչքան էլ «զօրաւորներուն արհամարհանքը կռնակդ ծեծէ»[1], չպետք է շրջվել ու հետ նայել, այլապես, ինչպես Հատտեճյանն է ասում, «եթէ ետ նայիք, մեռած եք այլեւս»[2]:

Մարդկային կորուստներն ապրողներից՝ մտերիմներից, միշտ էլ տանում են նրանց կյանքի փոքրիկ մի մաս. այս մարդկայնորեն պարզ ճշմարտության մասին է «...Եւ անոնք որ կը շարունակեն ապրիլ» պատմվածքը: Այս անգամ էլ Ռ. Հատտեճյանի դիտարկման առանցքը մարդու ապրումներն են, անհատի հոգու դրաման և միջավայրի ձևական ապրումակցումն ու սքողված անտարբերությունը: Մարդկանց բռնազբոսիկ հայացքները, շարժումները, ավելորդ հետաքրքրասիրությունը, կաղապարված խոսքը, կարծես, ավելի են ընդգծում երիտասարդ ամուսնուն կորցրած կնոջ թաքուն ապրումներն ու հոգու տվայտանքը:

Մարդիկ միայն երեսանց են տեսնում ուրիշի ողբերգությունը: «Եթէ իմ մասիս մտածէին, ատիկա պիտի ըլլար յիշելու համար թէ իրենք որքան երջանիկ էին»[3],- խորհում է հերոսուհին՝ երբեք ցույց չտալով իր թուլությունն ու անսահման վիշտը, հասկանալով, որ պետք է շարունակի ապրել թեկուզև պարտականություն կատարողի պես:

Կյանքում գալիս է մի պահ, երբ խիղճը՝ որպես դատավոր, կանգնում է մարդու և նրա անցնելիք ճանապարհի միջև և յուրօրինակ «դատավարություն» է սկսում՝ քննելով մարդու արած և չարած գործերը:

Մարդկանց մեծության ու խեղճության մասին խոսելու վերջաբանը տրամաբանորեն պետք է լիներ հենց նման մտահոգությամբ գրված գործը: Ժողովածուն եզրափակող այս պատմվածքում մարդը սեփական քննարկման առարկա է դարձնում իր մտածողությունը, հոգու ընդվզումը: Դատավորը մարդու երկրորդ Ես-ն է, որ ամբողջությամբ տեղյակ է նրա ապրած կյանքին, նրա՝ հասարակական կյանքում ունեցած հարաբերություններին, սերերին ու հիասթափություններին, ձեռքբերումներին ու թերացումներին: Իր կատարած յուրաքանչյուր քայլի համար մարդը պատասխանատվություն է կրում՝ անկախ նրանից՝ ընդունու՞մ է ներկայացված մեղադրանքը, թե՞ ոչ:

Հատտեճյանին՝ որպես հմուտ հոգեվերլուծող հեղինակի, հաջողվել է առարկայորեն ցույց տալ ներքին բախումը, որն իրականում երբեք տեսանելի չէ և չի կարող լինել. հեղինակը նկարագրական ասպարեզ է բերում մարդու ներքին աշխարհի հոգեճեղքման հետևանքով սկիզբ առած հոգեկան մակընթացություններն ու տեղատվությունները, սեփական Ես-ից հրաժարվելու անհնարինությունը և անմեղությունը, ապացուցելու անմտությունը:

«Անմեղութիւնը կռնակի վրայ» պատմվածքը կերպավորմամբ ու հարցադրմամբ սերտ առնչություններ ունի ավստրիացի էկզիստեցիալիստ գրող Ֆ. Կաֆկայի «Դատավարություն» վեպի անհեթեթ ու անկանխատեսելի իրավիճակային պատկերների հետ: Երկու ստեղծագործություններում էլ գլխավոր հերոսը ծերբակալվում է անհավանական, անիմաստ մեղադրանքով՝ հավատացած լինելով , որ սխալմունք է կատարվածը, և ինքն ազատ կարձակվի: Սակայն հոգեմաշ ու տանջալից հարցաքննություն-

---

[1] **Շուշանյան Վ.**, նույն տեղում, էջ 291 :

[2] **Հատտէճեան Ռ.**, էջ 77:

[3] Նույն տեղում, էջ 88:

ները, զավեշտալի իրավիճակները, չգործած հանցանքների անկռահելի մեղադրանքները ստիպում են անմեղ մարդուն հարմարվել տարիներ շարունակ հաստատիր թղթապանակում հավաքված բազմահնար ու բազմախնդիր մեղքերի առկայությանը՝ օր օրի ընդունելով դրանցից ազատվելու անհնարինությունը և ընդունելով մահը՝ որպես փրկություն:

«Միակ բանը, որ կարող եմ անել, մինչև վերջ հանգիստ մտածելու ունակությունը պահպանելն է....Արժե՞ ցույց տալ, որ մի տարի տևած դատավարությունը չի կարողացել խելքի բերել ինձ: Արժե՞ անխելք մարդու մահով ավանդել հոգին....Պետք չէ»[1],- գիտակցելով, որ ինքն արդար է, այնուամենայնիվ, իրավիճակին հարմարվում է Կաֆկայի հերոսը:

«Խցիկ վերադարձայ սրահէն ելլելով գլխիկոր, հանդարտ քայլերով: Երբ դուռը վրաս գոցուեցաւ, երկար շունչ մը առի եւ առաջին անգամ ըլլալով անդրադարձայ, որ չէի վախնար, չէի յուզուէր, չէի լար, նոյնիսկ չէի տառապեր: «Թերեւս մահը այս է» խորհեցայ եւ ուսերս թոթուեցի: Սկսայ սպասել»[2],-համակերպվում է Հատտեճյանի հերոսը:

Եզրակացություն

Այսպիսով՝ Ռ. Հատտեճյանի պատմվածքների ընթացքին բնորոշ են ուսումնասիրվող նյութի վերլուծության փիլիսոփայական մտածողությունը, նրա բնության բազմաշերտ քննությունը, հերոսների կամ հեղինակի խորհրդածությունները, մտահոգությունները, մենախոսություններն ու երկխոսությունները: Հեղինակը միշտ հավատարիմ է իր որդեգրած սկզբունքին՝ իրական աշխարհի, մարդկային հարաբերությունների և զգացմունքների ընկալումները տարբեր տեսանկյուններից սեփական մտածողական-վերլուծական տրամաբանությանն ու քննությանը ենթարկելուն:

Ընդգրկուն և համոզիչ է Ռ. Հատտեճյանի փիլիսոփայական ընդհանրացումը. մարդն անընդգրկելի տիեզերքում մի փոշեհատիկ է, աննշան հյուլե, որն այնքան խոցելի է ու անպաշտպան կյանքի անիմանալի և անքննելի հորձանուտներում:

Իր հոդվածներից մեկում, Ռ. Հատտեճյանին բնութագրելով, գրականագետ Հովհաննես Եղոյանը գրել է. «Ստեղծագործական հարուստ փորձով նա պարզել է, որ գեղարուեստական կառոյցում կենսականը մշակուող նիւթն է, իսկ հոգեբանական կառոյցներում՝ մարդու ճանաչումի ընթացքները, ներաշխարհի բերած անակնկալները: Կարելի է անվարան ասել, որ Հատտէճեանը ազգային տարազ «հագցրեց» գոյապաշտական սկզբունքներին՝ դառնալով հայ գրականութեան մէջ այդ դպրոցի անվերապահ առաջնորդը»[3]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հատտէճեան Ռ., Մարդոց մեծութեան եւ խեղճութեան մասին, Պոսթըն, 1979:
2. Դանիէլեան Ս., Ռոպեր Հատտէճեան. ներաշխարհի գեղարուեստական քննութիւն, Իսթանպուլ, 1996:

---

[1] **Կաֆկա Ֆ.,** նշվ. աշխ.,էջ 168-169:

[2] **Հատտէճեան Ռ.,** էջ 103:

[3] Հայկազեան հայագիտական հանդէս, հտ ԼԱ, Պեյրութ, 2011, էջ 264:

3. Թորանեան Թ., Ամբողջական գրագէտը. Ռոպէր Հատտեճեան, Հալէպ, 2002:
4. Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. ԼԱ, Պեյրութ, 2011:
5. Նարեկացի Գրիգոր, Մատեան ողբերգութեան, Երևան, 2003:
6. Շուշանյան Վ., Ներքին դաշտանկար, Երևան,1995:
7. Կաֆկա Ֆ., Դատավարություն, Երևան, 1991:

REFERENCES

1. Danie'lean S., R'oper Hatte'twean. Nerashxarhi gegharuestakan qnnut'iwn, (Artistic Exploration of the Inner World) Ist'anpul, 1996.
2. Hatte'twean R'.,Mardoc mec'ut'ean ew xeghtwut'ean masin, (On the Greatness and Wretchedness of People) Posty'n, 1979.
3. Haykazean hayagitakan hande's, (Armenian Studies Magazine) ht LA, Peyrut', 2011.
4. Kafka F., Datavarut'yun, (The Trial) Erevan, 1991.
5. Narekaci Grigor, Matean oghbergut'ean, (The Book of Tragedy) Erevan, 2003.
6. Shushanyan V., Nerqin dashtankar, (Internal Field Painting) Erevan, 1995.
7. T'oraneanT'.,Amboghjakan grage'ty'. R'ope'r Hattetwean, (Completely Literate. Roper Attechyan) Hale'p, 2002.

РЕЗЮМЕ

Проявление экзистенциализма в произведении Р.Аттечяна. сборник “О величии и убогости людей”

Мануш Балаян

Соискатель кафедры литературы и журналистики АРГУ

Степанакерт, Арцах

Ключевые слова: экзистенциализм, величие, убогость, самоконтроль, самопознание, философская глубина, психологические обобщения, образ, переживание, мысль.

Известный прозаик Ропер Аттечян заложил в армянской диаспоре прочную основу основанного на современной европейской литературе художественного метода -философии экзистенциализма, согласно которому воля к выживанию, вера в спасение создают удивительный мир,где неизбежным становится столкновение реального и воображаемого. В сборнике "О величии и бедности людей" он рассматривает общественные и человеческие взаимоотношения с точки зрения экзистенциализма и мышления. В этом случае движущей силой всего является человек, человеческое мышление, душевное состояние внутреннего мира, которое несет в себе память прошлого, неизбежное примирение настоящего, ум и надежду будущего. В сборнике исследуется противоречивая сущность человека, который изначально является совокупностью души и тела: дух стремится к небу, к величию, а тело – к земле, напоминающей о смерти и приводящей к человека к убогости.

В статье говорится об истоках и особенностях атечяновского экзистенциализма, отношениях с армянскими и европейскими авторами. Согласно свидетельствам, экзистенциальные принципы Аттечяна глубоко национальные, и он является безусловным лидером этой школы в армянской литературе.

SUMMARY

The Manifestation of Existentialism in the Work of R. Hattechian. Collection "On the Greatness and Wretchedness of People"

Manush Balayan

ArSU, Department of Literature and Journalism Ph.D. Student

Stepanakert, Artsakh

Keywords: existentialism, greatness, wretchedness, self-control, self-knowledge, philosophical depth, psychological generalizations, image, experience, thought.

The famous novelist RoberHattechian laid a solid foundation in the Armenian Diaspora for an artistic method based on modern European literature - the philosophy of existentialism, according to which the will to survive, faith in salvation create an amazing world where the collision of the real and the imaginary becomes inevitable. In the collection "On the Greatness and Wretchedness of People" he examines social and human relationships from the point of view of existentialism and thinking. In this case, the driving force of everything is man, human thinking and the mental state of the inner world, which carries the memory of the past, the inevitable reconciliation of the present, the mind and the hope of the future. The collection explores the contradictory essence of a person who is initially a combination of soul and body: the spirit aspires to heaven, to greatness, and the body - to the earth, which reminds of death and leads to a person to squalor.

The article talks about the origins and features of Hatechyan's existentialism, relations with Armenian and European authors. According to the evidence Hatechyan's existential principles are deeply national, and he is the undisputed leader of this school in Armenian literature.